ՍԻՐՎԱԾ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԸ

ՎԱԺԱ ԱԶԱՐԱՇՎԻԼԻՆ ԿՆՇԻ ԻՐ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Անհավատալի է, սակայն այս տարի կոմպոզիտոր Վաժա Ազարաշվիլին կդառնա 80 տարեկան: Նա այսօր էլ ակտիվ է ինչպես իր ստեղծագործական, այնպես էլ՝ հասարակական կյանքում: Կարծես վերջերս էր, երբ նրան լսարանին ներկայացնում էին որպես «երիտասարդ» կոմպոզիտոր, իսկ նրա առանձին երգերը իրենց կայուն տեղն են զբաղեցրել վրաց ճանաչված համույթների երգացանկում:

Երաժշտության ասպարեզում իր առաջին քայլերը Վաժա Ազարաշվիլին սկսել է ջութակ նվագելով, նա հաճախել է Թբիլիսիի երաժշտական ուսումնարան: Թբիլիսիի կոնսերվատորիայում երգահանը վարպետությունն ուսուցանել է Ալեքսանդր Շավերզաշվիլու եւ Իոն Տուսկիայի մոտ: Նման հեղինակությունների մոտ արհեստավարժության նախապատրաստությունը անձնական շնորհի զուգորդմամբ, առանձնակի ընդգծվեց Դմիտրի Շեստակովիչի ներկայությամբ, պետական քննության ժամանակ:

Վաժա Ազարաշվիլու «Խեւիսբերի» բալետը եւ «Յոթ օպերետաները» հաջողությամբ ներկայացվել են վրացական թատրոններում: Երկրի համերգասրահներում լայն ընդունելության են արժանացել նրա սիմֆոնիկ ստեղծագործությունները, գործիքային համերգներն ու կամերային գործերը: Էլ չենք խոսում նրա երգերի մասին, որոնք թույլ են տալիս նրան համարել վրացական Շուբերտ:

Ժողովրդական արտիստի պաշտոնական ու գործնական կոչման միջեւ միշտ նկատվում է որոշակի սահմանագիծ, սակայն Վաժա Ազարաշվիլու պարագայում դա լրիվությամբ բացակայում է: Նա ցանկալի հյուր է ինչպես շարքային մարդկանց, այնպես էլ վերնախավի համար, բոլորի հետ առնչվում անկեղծորեն: Վաժան լայն ճանաչման է արժանացել նաեւ երկրի սահմաններից դուրս: Վերջերս նա մասնակցեց Դուբնա ակադեմիական ավանում ֆիզիկոսների կողմից անցկացված իր ստեղծագործական երեկոյին, ապա ընդունեց Հայաստանից առաքված հրավերը, մասնակցեց Երեւանում անցկացված արդի վրացական երաժշտության փառատոնին: Անջնջելի տպավորություն թողեց նրա այցը «Հայարտուն» մշակութային կենտրոն, որտեղ հանդիպում ունեցավ վիրահայ հասարակայնության հետ:

Երկար տարիներ Վաժա Ազարաշվիլին գլխավորել է Վրաստանի կոմպոզիտորների միությունը, դասավանդել կոնսերվատորիայում: Վերջին տարիներին ստեղծված իրավիճակը լրջորեն թուլացրեց երաժշտական ընկերակցության նյութական բազան: Կինոն եւ թատերական ինդուստրիան, կտրուկ նվազեց արհեստավարժ կոմպոզիտորների ստեղծագործության պահանջարկը, սակայն Վաժա Ազարաշվիլին շարունակում է ակտիվորեն աջակցել վրաց կոմպոզիտորների դպրոցի հեղինակության բարձրացմանը:

Վերջերս Ջանսուղ Կախիձեի անվան երաժշտական, մշակութային կենտրոնում անցկացվեց կամերային երաժշտության համերգ: «Ֆորտսանդո» երիտասարդական լարային քառյակը հիանալի կատարեց կոմպոզիտորի մինյատյուրները, այդ թվում՝ հին Թբիլիսիին նվիրված «Ֆանտազիան», որը Սանկտ Պետերբուրգում արժանացել էր միջազգային մրցույթի առաջին պարգեւին: Քառյակի անդամներ Սալոմե Բուկիան, Եկատերինա Սափարիշվիլին, Սամվել Փերիխանյանը եւ Սոփիո Բուկիան, դաշնակահարուհի Նաթիա Ազարաշվիլու հետ կարճ ժամանակամիջոցում կազմեցին համերգի ծրագիրը: Նշենք, որ ներկայումս Սոփիոն սովորում է Գերմանիայում, պատրաստվում է դառնալ բժիշկ, Սամվելն ու Նաթիան աշխատում են օպերային թատրոնում, իսկ Սալոմեն եւ Եկատերինան՝ Թբիլիսիի սիմֆոնիկ նվագախմբում, սակայն նրանց համույթային համակեցությունն արժանի է բարձր գնահատականի:

Անտարակույս, անցկացված համերգը երկար կմնա ունկնդիրների հիշողության մեջ, թեպետ առաջիկայում սպասվում են հոբելյանական այլ միջոցառումներ: Դրանց շրջանակներում բացառված չեն նաեւ պրեմիերաներ, քանի որ Վաժա Ազարաշվիլին այսօր էլ լի է ստեղծագործական ավյունով:

Քաջառողջություն եւ ստեղծագործական հաջողություններ Մաեստրոյին:

ԱՐՏՅՈՄ ԿԻՐԱԿՈԶՈՎ

ԻՆԴԵՔՍ

ԹԲԻԼԻՍԻՆ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՄԵՆԱԹԱՆԿ ՔԱՂԱՔ

Վրաստանի մայրաքաղաքը զբոսաշրջիկների համար բավականին թանկ արժեցող քաղաք է: Թբիլիսիում անցկացրած մեկ օրվա արժեքը գերազանցում է Բաքու, Երեւան եւ անգամ Ստամբուլ այցելած զբոսաշրջիկի մեկօրյա ծախսը:



«Նումբեո» գործակալության կողմից կազմած վարկանիշի համաձայն, 2016 թվականի տվյալներով, միջին մակարդակով ուղեւորության դեպքում, Թբիլիսիում մեկօրյա ծախսը կազմում է 67 դոլար, իսկ բարձր մակարդակի ուղեւորության դեպքում՝ 178 դոլար:

Թբիլիսիում բարձր են հյուրանոցների գները, այդ առումով, Թբիլիսին 700-ից ավելի քաղաքների թվում նշվում է առանձնակի: Ըստ գործակալության տվյալների, Թբիլիսի այցելած զբոսաշրջիկի համար, մեկօրյա ծախսը գրեթե կրկնակի գերազանցում է տարածաշրջանային մյուս մայրաքաղաքներ, մասնավորապես, Բաքու, Երեւան եւ անգամ Ստամբուլ կատարելիք ուղեւորության ծախսերից:

ԴՊՐՈՑ-ԲՈՒՀ

ԶՈՅԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ. «ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ԲԱՑԱՌԻԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ»

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

Ծրագրի ղեկավարությունը, ի դեմս Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի պրոֆեսոր Կախա Գաբունիայի, ամեն ինչ անում է, որ դյուրացնի ուսանողների ուսումնառության հետագա գործընթացը: Օրինակ, այս տարի Իվանե Ջավախիշվիլու անվան պետհամալսարանի դասախոսների ջանքերով, ծրագրին մասնակից ուսանողների համար կազմվել են իրավագիտության, բիզնեսի, տնտեսագիտության, ֆիզիկայի, կենսաբանության, քիմիայի, մաթեմատիկայի դասագրքեր՝ բառարաններով հանդերձ, որպեսզի վրացերենի դասընթացն անցնելիս, ուսանողները, միեւնույն ժամանակ, ծանոթանան այն մասնագիտությունների բառապաշարին, որտեղ մտադիր են շարունակելու իրենց ուսումնառությունը: Ստեղծվել է նաեւ հատուկ ծրագիր, որի համաձայն բակալավրիատում սովորող վրացալեզու ուսանողներն ակտիվ շփման մեջ են մտնում Վրաց լեզվի ուսուցման ծրագրի ուսանողների հետ, նրանց հետ այցելում տարբեր թանգարաններ, ցուցահանդեսների, կիսվում նրանց հետ իրենց փորձով, տալիս խորհուրդներ, տարբեր թեմաների վերաբերյալ շնորհանդեսներ պատրաստում, դիտում ֆիլմեր, կազմակերպում այդ ֆիլմերի քննարկումներ, մասնակցում պետհամալսարանի Երիտասարդական կենտրոնի կազմակերպած հանդիպումներին, միջոցառումներին, ինչը անշուշտ նպաստում է մեր երիտասարդների՝ Վրաստանի հասարակայնությանը ինտեգրմանը անչափ հրատապ խնդրին:

- Ձեր շրջանավարտները ինչպե՞ս են կարողանում սովորել բակալավրիատում, իսկ ավարտելուց հետո նրանց հաջողվո՞ւմ է աշխատանք գտնել:

- Բակալավրիատում սովորելու առաջին կիսամյակը ուսանողները դժվար են հաղթահարում, քանի որ, ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ մեկ տարում լեզվին լիարժեքորեն տիրապետելը դժվար գործ է, առավել եւս, որ այստեղ խոսքը միայն խոսակցական լեզվի տիրապետման մասին չէ. ուսանողները պետք է տիրապետեն նաեւ մասնագիտական բառապաշարին, ուսումնառության ընթացքում վրաց լեզվով հանձնեն տարբեր առարկաների քննություններ, եւ ի վերջո, նրանք պետք է դառնան մասնագետներ, որոնք աշխատելու են երկրի տարբեր կառույցներում: Մեր երիտասարդներն այս դժվարությունը եւս կարողանում են պատվով հաղթահարել: Չեմ ուզում ազգանուններ նշել, սակայն մենք ունենք բակալավրիատում սովորող ուսանողներ, որոնք 100 հնարավոր միավորից կարողանում են 90-ից ավելին հավաքել բոլոր հանձնվող առարկաներից եւ նույնիսկ գերազանցության կրթաթոշակ ստանալ: Այս տարի մեր երիտասարդներից շատերը, ավարտելով իրավաբանական ֆակուլտետի բակալավրական ծրագիրը, վրաց լեզվով հանձնելով Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի կողմից անցկացվող կենտրոնացված ընդունելության քննությունները, ընդունվել են մագիստրատուրա:

Անպայման ուզում եմ նշել, որ տարբեր տարածաշրջաններից Թբիլիսիի տարբեր բուհերում սովորող ուսանողներն անձնական զրույցներում միշտ նշում են, որ բուհն ավարտելուց հետո վերադառնալու են իրենց ծննդավայրեր եւ լրացնելու են այնտեղ այդքան խիստ անհրաժեշտ վրացերենի իմացությամբ տարբեր մասնագիտությունների՝ տնտեսագետների, իրավաբանների, բժիշկների, մանկավարժների, ինչպես նաեւ հանրային ծառայողների պակասը, ապահովելով Վրաստանի Հանրային ծառայության մասին օրենքի 12-րդ հոդվածի պահանջը. Պետական ծառայությունը Վրաստանում իրականացվում է վրաց լեզվով:

2014-2015 ուսումնական տարում 1+4 ծրագիրն ունեցավ առաջին շրջանավարտները: Ինչ վերաբերում է շրջանավարտների աշխատանքի տեղավորման հարցին, ապա դա երիտասարդներն իրենք են լուծում, շատերը դեռ մագիստրատուրայում են շարունակում սովորել, շատ հաճախ նրանք պետական կառույցների կողմից հայտարարված մրցույթներին մասնակցելու արդյունքում են հաջողությամբ լուծում իրենց զբաղվածության հարցը, օրինակ, շրջանավարտներից երկուսը՝ Ալինա Սիմոնյանը (Ծալկայի շրջ.) եւ Հռիփսիմե Ղրմաջյանը (Նինոծմինդայի շրջ.) այս տարի, մասնակցելով Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության հայտարարված «Վրաց լեզուն՝ ապագա հաջողության համար» մրցույթին՝ իբրեւ մանկավարժներ, սկսել են աշխատել հենց իրենց հայրենի գյուղերում:

Լիահույս ենք, որ մեր ուսանողները կկարողանան իրենց գիտելիքներն ի սպաս դնել թե՛ իրենց տարածաշրջաններում, թե՛ երկրի այլ բնակավայրերի տարբեր կառույցներում:

- Եվ վերջին հարցը. այս տարի Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանում տեղի ունեցավ հայ եկեղեցական՝ «Սուրբ Սարգիս» տոնակատարությանը նվիրված միջոցառում, այն հա՞յ ուսանողներն էին նախաձեռնել, եւ որքա՞ն են նրանք ընդգրկված բուհի ընդհանուր միջոցառումներին:

- Ինչ վերաբերում է «Սուրբ Սարգսին», ապա ասեմ, որ այդ միջոցառումը ոչ թե հայ ուսանողների, այլ համալսարանում գործող «Երիտասարդական կենտրոնի» նախաձեռնությունն էր, որի խնդրանքով, հայ ուսանողները պարզապես աջակցեցին միջոցառմանը: Նրանք, իհարկե, իրենց մասնակցությունն են ունենում բուհում կազմակերպվող բոլոր հանդիպումներին, միջոցառումներին, էքսկուրսիաներին եւ ապրում համալսարանի ուսանողական լիարժեք ու հագեցած առօրյայով:

- Շնորհակալություն զրույցի համար ու նորանոր հաջողություններ Ձեզ եւ Ձեր ուսանողներին:

Զրուցեց
ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ

Նկարում.- Զոյա Մխիթարյանը Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան պետհամալսարանի «Վրաց լեզվի ուսուցման կրթական ծրագրի» ապագա տնտեսագետների խմբի հետ:

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

Ðà¶º´²ÜàôÂÚàôÜ

ԵՐԲ ԵՐԵԽԱՆ ԳԵՐԱԿՏԻՎ է

Բոլոր ծանոթներս միաձայն ասում են, որ երեխաս գերակտիվ է եւ պետք է առաջնակի վերաբերմունք դրսեւորել: Իսկ թե կոնկրետ ի՞նչ է արվելու, չեն ասում: Գուցե դուք օգնեք:

Վ.Վարդանյան

Բոլնիսի

Հետաքրքիր է, որ, ըստ հետազոտությունների արդյունքների, երեխաների գերակտիվության եւ ցրվածության ախտանիշն ավելի հաճախ դրսեւորվում է բաց գույնի մազեր եւ երկնագույն աչքեր ունեցողների եւ գրեթե 5 անգամ ավելի տղաների, քան աղջիկների շրջանում: Ինչո՞ւ: Թերեւս բնությունն աղջիկներին ստեղծելիս հոգ է տարել, որ նրանք նույնիսկ մոր արգանդում ավելի դիմացկուն լինեն, քան տղաները:

Գերակտիվության եւ ցրվածության ախտանիշի ամենատարածված պատճառներից են հղիության ընթացքում մոր վնասվածքները, տարած վարակները, թունավորումը եւ այդ ժամանակահատվածում ընդունած դեղերի ազդեցությունը, ինչպես նաեւ բնապահպանական իրավիճակի ընդհանուր վատթարացումը: Ինչպե՞ս է դրսեւորվում գերակտիվությունը: Այդպիսի երեխաներին բնորոշ է անդադար անհանգիստ շարժման մեջ գտնվելը, ուշադրության կենտրոնացման հարցում դժվարությունը, անվերահսկելի վարքագիծը:

Ասում են, որ երեխաների համար ավելի օգտակար բան չկա, քան մայրիկի քնքուշ ձեռքերի հպումը: Օրվա մեջ թեկուզ 15 րոպե գտեք փոքրիկի հետ առանձնանալու եւ քնքշանքի նման պահեր պարգեւելու համար:

Երեխային հնարավորություն ընձեռեք իր ուժերը գործունեության տարբեր ասպարեզներում փորձելու համար:

Օրինակ, սկզբի համար լավ կլինի, եթե փոքրիկին առաջարկեք նկարել: Նրան ներկեր, մատիտներ, ֆլոմաստերներ տվեք: Սովորական ալբոմների փոխարեն կարող եք պաստառ կամ պլակատ վերցնել, երեխայի հասակի բարձրությամբ կախել պատից: Բոլորին է հայտնի, որ փոքրիկները շատ են սիրում պատերին նկարել, ուրեմն թողեք, որ նա դա անի: Նկարված պլակատը կարելի է հանել ու տեղը նորը կախել: Պատկերացրեք, թե ձեր երեխան որքան ուրախ կլինի դրանք տեսնել մի քանի տարի անց:

Խուսափեք անդադար դիտողություններից, փոքրիկի գործունեությանն անընդհատ միջամտելուց:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՄԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՕԳՈՒՏՆԵՐՆ ՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ

Հումակերությունն օգտակար է այն դեպքերում, երբ անհրաժեշտ է օրգանիզմը մաքրել: Այն նպաստում է ուռուցքների եւ սիրտանոթային հիվանդությունների կանխարգելմանը:

Հում բանջարեղենն ու մրգերը վիտամինների ու օգտակար նյութերի մեծ պաշարներ են պարունակում, որոնք ջերմային մշակման ժամանակ կորցնում են իրենց արժեքավոր հատկությունների ավելի քան կեսը: Հումակերությունը խթանում է օրգանիզմի պաշտպանունակությունը: Սննդառության այս տեսակն օգտակար է այն մարդկանց համար, ովքեր տառապում են երիկամային հիվանդություններով, ռեւմատիզմով: Կարգավորվում է ջրային փոխանակումը, քանի որ այդ դեպքում օգտագործվող աղի քանակը պակասում է: Այս միջոցը կիրառելիս բարելավվում է հաստ աղիքի գործունեությունը: Մրգերն ու բանջարեղենը նպաստում են ավելորդ քաշից ազատվելուն:

Հումակերությունը կարող է լրջորեն վնաս հասցնել մարդու օրգանիզմին հենց միայն այն պատճառով, որ մթերքների խիստ սահմանափակ ցանկը օրգանիզմը զրկում է սննդարար բազմաթիվ նյութերից: Հետեւաբար, հումակերը պետք է բավականաչափ գիտելիքների տիրապետի, իրեն այնպիսի մթերքներով ապահովելու համար, որոնք հում վիճակում պարունակում են օրգանիզմին անհրաժեշտ բոլոր նյութերը: Հետազոտությունները ցույց են տվել, որ հումակերների շրջանում ատամների արծնաշերտն ավելի շուտ է քայքայվում, իսկ արյան մեջ ցածր է լինում B12 վիտամինի քանակը, որն ավելի շատ է պարունակվում կենդանական սննդի մեջ: Իսկ հում միս եւ ձուկ ուտելու դեպքում կարող են օրգանիզմ ներթափանցել ախտածին մանրէներ:

Հում բանջարեղենի մեջ հաճախ օգտակար նյութերից բացի, պարունակվում են նաեւ մեծ քանակությամբ թույներ, որոնցով դրանք մշակում են աճեցնելիս, տեղափոխելիս եւ պահելիս:

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄԱՐԶԵՔ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն ինչ հիշելու ունակությունն ամենքին չէ, որ տրված է, սակայն ամեն ոք կարող է ինքնուրույն զարգացնել իր հիշողությունը:

Դրա համար պետք է, որ ուղեղը բավականաչափ թթվածին ստանա: Հետեւաբար, լավ հիշողություն ունենալու համար պետք է ավելի հաճախ գտնվել բնության գրկում, զբոսնել ու մաքուր օդ շնչել, բնակարանն օդափոխել, զբաղվել մարմնամարզությամբ:

Վատ հիշողությունը քրոնիկական գերհոգնածության եւ տեւական անքնության առաջին նշանն է: Այդ խնդիրը չունենալու համար պետք է առնվազն 7 ժամ քնել:

Որպեսզի հիշողությունը ձեզ չդավաճանի, պետք է ճիշտ սնվել: Ուղեղի համար հատկապես օգտակար են ընկուզեղենը, մրգերը, բրոկոլին, ձուկն ու ծովամթերքը:

Տեղեկատվության մեծ ծավալ եւ բարդ տերմիններ մտապահելու համար այդ բառերը ասացցարեք ձեր ուղեղին ծանոթ պատկերների հետ:

Ուղեղը մկանի նման է, եթե չմարզեք, այն ատրոֆիայի կենթարկվի: Հետեւաբար, եթե չեք հիշում որեւէ անուն կամ հեռախոսահամար, համապատասխան աղբյուրից որոնելու եւ գտնելու փոխարեն, փորձեք մտաբերել:

Կատարեք այս պարզ վարժությունները.

Ատամները մաքրեք ձախ ձեռքով, եթե դուք աջլիկ եք, եւ աջ ձեռքով, եթե ձախլիկ եք:

Վարժվեք գնումների ցուցակը պահել ձեր մտքում, այլ ոչ թե թղթին գրի առնել:

Կինոնկար դիտելուց հետո մտքում այն կրկին փորձեք վերհիշել՝ իրադարձությունների ողջ հաջորդականությամբ: Դա կտեւի ընդամենը 20 վայրկյան, բայց օգուտը հսկայական կլինի:

Շաբաթական առնվազն մեկ գիրք կարդացեք: Այդպիսով դուք տարվա մեջ կկարդաք 52 գիրք, իսկ 10 տարում՝ 520 գիրք:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈՆԻ ԲՈՒԺԻՉ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոնը մարդու ամենասիրելի պտուղներից մեկն է: Դժվար թե գտնվի մի ընտանիք, որ ծմեռվա համար հոնի մուրաբա, կոմպոտ, հյութ կամ գոնե չորացրած հոն չունենա: Դա նույնպես գալիս է դարերի ընթացքում կուտակված կենսափորձից՝ ժողովրդական բժշկությունից:

Հոնը պարունակում է մեր օրգանիզմի համար մի շարք կարեւոր նյութեր՝ շաքար, օրգանական թթուներ, վիտամին C, դաբաղիչներ եւ այլն: Տեղին է նշել, որ թվարկած նյութերի տեսակետից, վայրի պայմաններում՝ անտառում, աճած հոնն ավելի հարուստ է, քան այգում աճեցրածը: Անտառի հոնի մեջ շաքարի քանակը հասնում է մոտ 9%-ի, օրգանական թթուները կազմում են 2-3%, վիտամին C-ն՝ 55 մ/գ%, սակայն այգում աճեցրած հոնի պտուղներն ավելի խոշոր, մսալի ու հյութալի են լինում:

Ժողովրդական բժշկության մեջ հոնը հայտնի է որպես լավագույն միջոց նյութափոխանակության, սակավարյունության, մաշկի հիվանդությունների, պոդագրայի եւ մկանային ցավերը բուժելու համար: Առաջարկվում է պատրաստել հոնաջուր՝ մեկ բաժակ ջրի համար վերցնել մեկ ճաշի գդալ չոր հոն, դնել կրակի վրա, թողնել մինչեւ եռալը, վերցնել կրակից, թողնել 30-50 րոպե եւ օրական 3 անգամ կես բաժակի չափ խմել:

Հոնի հրաշալի դաբաղիչ հատկության շնորհիվ, բժշկության մեջ այն օգտագործվում է աղիքաստամոքսային համակարգի խանգարումների ժամանակ: Հոնից պատրաստում են նաեւ դիետիկ ճաշատեսակներ, հատկապես՝ մանկական պրակտիկայում: Այն հրաշալի ախորժաբեր ու քրտնաբեր հատկություն ունի: Հոնը թարմ վիճակում երկար պահելու համար, պետք է մաքրել ավելորդ մասերից, վրան ցանել շաքարավազ ու պահել հով տեղում: Այն կարելի է երկար պահել նաեւ շաքարահյութի՝ օշարակի մեջ: Հոնը պետք է չորացնել շոգ օրերին, բայց ոչ արեւի տակ (տանիքում եւ այլ տեղերում)՝ փռելով որքան կարելի է բարակ շերտով, որ շուտ չորանա: Հակառակ դեպքում, այն փչանում է: Չորացրած հոնը ավելի լավ է պահել փայտյա ամանի մեջ, չոր տեղում:

ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ

Սիրի'ր, բայց սիրո գերի մի' դառնա:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ
(1875-1957)
Հայ բանաստեղծ

Այն, ինչ հաճո չէ Աստծուն, չի կատարվի, ինչ էլ լինի:

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ
(XII-XIII դար)
Վրաց բանաստեղծ

Ոչ մի բանում հապաղելն այնքան օգտակար չէ, որքան զայրույթի պահին:

ՊՈՒԲԼԻԼԻՈՍ ՍԻՐՈՍ
(մ.թ.ա. 1-ին դար)
Հռոմեացի բանաստեղծ

Բոլոր հանցագործությունները ու բոլոր արատները իրենց ծագումով պարտական են թուլությանը: Եվ այդ պատճառով նրանք արժանի են խղճահարության:

ԱԼՖՐԵԴ ՎԻԿՏՈՐ ԴԸ ՎԻՆՅԻ
(1797-1863)
Ֆրանսիացի գրող

Ով կարող է յուրաքանչյուր ակնթարթը լցնել խոր բովանդակությամբ, նա անսահմանորեն երկարացնում է իր կյանքը:

ԿՈՒՐՏ
(1913-1936)
Գերմանացի լեռնագնաց

Ամեն օր Աստված ձեզ համար արեւի լույսի հետ նաեւ հնարավորություն է ուղարկում՝ փոխելու այն ամենը, ինչը մեզ դժբախտ է դարձնում: Եվ ամեն օր մենք փորձում ենք ձեւացնել, թե իբր չենք նկատում այդ հնարավորությունը:

ՊԱՈՒԼՈ ԿՈՒԵԼՅՈ
(ծնվ.1947թ.)
Բրազիլացի գրող եւ բանաստեղծ

Երբեմն ավելի լավ է դեմքին կեղծ ժպիտ դրոշմել, քան բոլորին բացատրել, թե ձեզ հետ ինչ է կատարվում:

Ա.ՄԻՆԱՍՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

²Ü°Î¸à¶Ü°ð

** Բակի անտեր շան ձագին մեկը գրկում է, որ տանի:*

- Ինչո՞ւ եք տանում, ախր բոլորիս սիրելին է,- տրտնջում է մի կին:

- Բա թողնե՞մ, որ մոր պես բոմժ լինի՞,- ասում է տանողը:

** Նորքեցին բարկանում է իր տղայի վրա.*

- Հերիք չի՞ գոռաս:

- Ինչո՞ւ ես բարկանում: Անունը Գոռ ա,- ասում է կինը:

** - Ինչո՞ւ ես երշիկը շանը տալիս,- դժգոհում է հարեւանը:*

- Բա քեզ տա՞մ,- ծիծաղում է Սուրայրը:

** Մեկը քայլում է կառամատույցով եւ գլխով խփում վագոններին: Նրան հարցնում են.*

- Ինչո՞ւ եք այդպես անում:

- Տոմսում գրված է «փափուկ վագոն»: Դե', ես էլ ստուգում եմ:

** - Սիրելիս, ինձ թվում է նապաստակն ամենահիմար կենդանին է: Այդպես չե՞ս կարծում:*

- Միանգամայն, ճիշտ ես, նապաստակս...

** Մեկը ամուսնանում է ֆրանսուհու հետ, բայց մի ամսից բաժանվում է: Ընկերները հարցնում են.*

- Ինչո՞ւ:

- Շատ կեղտոտ էր:

- Ի՞նչ ես ասում:

- Ամեն օր լողանում էր:

** Գեւորգին ասում են.*

- Դու գիտե՞ս, որ կինդ ման է գալիս:

- Է, թող ման գա, տաք է հագնված:

** Ենթասպան ասում է զինվորին.*

- Քանի՞ անգամ ասեմ, որ Կարլ Մարքսն ու Ֆրիդրիխ Էնգելսը ամուսիններ չեն, այլ 4 տարբեր մարդիկ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

«ԸՆԴԴԵՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ» ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈԲԱԼ ՖՈՐՈՒՄԸ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Գլոբալ ֆորումին մասնակցության հրավեր են ստացել Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, խորհրդարանի առաջին փոխխոսնակ Մանանա Կոբախիձեն, օրենսդիր մարմնի մի շարք կոմիտեների ու խմբակցությունների ղեկավարներ, Վրաստանի գրողների միության փոխնախագահ Մաղվալա Գոնաշվիլին, Վրաստանի Գիորգի Լեոնիձեի անվան գրականության թանգարանի տնօրեն Լաշա Բաքրաձեն, ազգային փոքրամասնությունների հարցերով Վրաստանի նախագահի խորհրդական Սոփիո Շամանիդին, ուրիշներ:

Գլոբալ ֆորումում Վրաստանի հայությունը ներկայացնում են Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Հենզել Մկոյանը, Սամվել Պետրոսյանը, Ռուսլան Պողոսյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, «Հայարտուն» մշակութային կենտրոնի տնօրեն Լեւոն Չիդիլյանը:

Ֆորումի աշխատանքին մասնակցեց նաեւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այցով գտնվում էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում:

Աշխատանքային այցի շրջանակներում ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանն անցկացրին խորհրդակցություն ԼՂՀ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության մարմինների ներկայացուցիչների հետ:

Քննարկվեցին վերջին օրերին Ադրբեջանի ագրեսիայի հետեւանքով երկրում ստեղծված իրավիճակին վերաբերող հարցեր:

Աշխատանքային այցով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գտնվող Սերժ Սարգսյանը՝ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հետ խորհրդակցություն անցկացրեց նաեւ Պաշտպանության բանակի բարձրագույն սպայական կազմի հետ, որի ընթացքում քննարկվեց բանակաշինությանն առնչվող հարցերի լայն շրջանակ:

ԸՆԴԳԾՎԵՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը ճիշտ է համարում Մոսկվայում կայացած Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին մասնակցելու որոշումը:

«Երկրի վարչապետը պետք է զգացմունքներով որոշում չկայացնի, մենք պետք է մտածենք մեր պետության շահերից ելնելով»,- նշեց Հայաստանի վարչապետը: Կառավարության ղեկավարի խոսքերով, Ռուսաստանի վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը Հայաստան այցի ժամանակ խնդրել է իրեն, որպեսզի մասնակցի նիստին:

«Ես, իհարկե, կարող էի չմասնակցել ու հաճոյանալ ժողովրդի այն հատվածին, որն ասում էր՝ մի գնացեք, պատիվ չի բերի, բայց կարծում եմ՝ գնալը շատ ճիշտ էր, արդյունավետ էր: Այնտեղ առաջին իսկ պահին որոշում կայացվեց, որ մայիսի 20-ին Երեւանում անցկացվի ԵԱՏՄ վարչապետերի խորհրդի նիստը: Այդ որոշումը միաձայն ընդունվեց»,- ասաց նա:

Նշենք, որ Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստը Մոսկվայում անցկացվել է ապրիլի 13-ին: Մինչ այդ, ապրիլի 7-ին պաշտոնական այցով Երեւան էր ժամանել ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը: Այցի ընթացքում քննարկվել էր ապրիլի 8-ին Երեւանում ծրագրված Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի հետաձգման եւ այն Մոսկվայում անցկացման հարցը: Նիստի հետաձգման առաջարկությունն արել էր Ղազախստանը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻՆ

Հայաստանի ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը, Մոսկվա կատարած աշխատանքային այցի շրջանակներում, ապրիլի 20-ին ՌԴ Պետդումայում հանդիպել է Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դումայի նախագահ Սերգեյ Նարիշկինի հետ:

Հանդիպմանը կողմերն անդրադարձան ապրիլի սկզբներին Լեռնային Ղարաբաղում ծավալված դիմակայության հարցին:

Էդուարդ Շարմազանովը, մասնավորապես, նշեց, որ Ռուսաստանը՝ որպես ՀԱՊԿ-ի անդամ եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, տեղյակ է տարածաշրջանային անվտանգության խնդիրներից: Էդուարդ Շարմազանովի խոսքերով, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունները, այդ թվում՝ Ռուսաստանը, պետք է Ադրբեջանին պարտադրեն վերադառնալ 1994 թվականին ստորագրված հրադադարի ռեժիմին:

Խոսելով Թուրքիայի իշխանությունների մասին՝ Հայաստանի ԱԺ փոխնախագահը մտահոգություն է հայտնել այն կապակցությամբ, որ Թուրքիան, փաստացի շրջափակման մեջ պահելով Հայաստանը, նաեւ աշխարհում միակ երկիրն է, որ անգամ պաշտպանում է Ադրբեջանի հանցավոր իշխանությունների հանցագործությունները:

Ի պատասխան Հայաստանի ԱԺ փոխնախագահի ներկայացրած փաստերի՝ ՌԴ Պետական դումայի նախագահ Սերգեյ Նարիշկինը հայտնել է իր մտահոգությունը՝ նշելով, որ ապրիլի առաջին օրերին տեղի ունեցածը հրադադարի կնքումից հետո այդ ծավալի առաջին գործողություններն են, որոնք իրոք մտահոգիչ են:

Սերգեյ Նարիշկինը նշել է, որ ռուսական պատվիրակությունը կմասնակցի ապրիլի 23-ին Երեւանում կայանալիք «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ համաժողովին:

ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ՝ ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոմոբիլային ճանապարհը կվերականգնվի ու կարդիականացվի:

Կառավարության նիստում Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարար Գագիկ Բեգլարյանը նշեց, որ աշխատանքները նախատեսվում է սկսել Եվրոպական ներդրումային եւ Ասիական զարգացման բանկերից ներգրավելիք բանկային միջոցներով: «Ծրագրով նախատեսվում է ավտոճանապարհի համապատասխան հատվածի երթեւեկելի մասի լայնացման, ինչպես նաեւ որոշակի հատվածներում ճանապարհի նախագծի փոփոխման աշխատանքներ»,- ասաց նախարարը:

Կառավարության ընդունած որոշմամբ կասեցվեցին Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհին հարող տարածքներում իրականացվող քաղաքաշինական գործունեությունը եւ հողհատկացման գործընթացը:

ՄԱՅԻՍԻՆ ԿՆԵՐԿԱՅԱԾՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի կառավարությունը հաստատեց 2015թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ Հայաստանի պետական կառավարման մարմիններին հանձնարարելով մինչեւ ապրիլի 26-ը Հայաստանի ֆինանսների նախարարությանը ներկայացնել իրենց դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ հաշվետվություն:

Նշվեց, որ բյուջեի հաշվետվությունն Ազգային ժողովին է ներկայացվելու մինչեւ մայիսի մեկը:

Հաշվետվության մեջ նշվում է, որ անցյալ տարի իրականացվել են արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության մեջ ընդգրկված 8 ոլորտի զարգացման համար նախատեսված աշխատանքները: 2015 թվականի պետական աջակցության ծրագրի շրջանակում մասնակի սուբսիդավորվել են 16 ընկերության վարկերի տոկոսադրույքներ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 5,5 ՏՈԿՈՍ

Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2016 թվականի հունվար-մարտին 5,5 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Այս տարվա մարտին, փետրվարի համեմատ, ցուցանիշն աճել է 13,8 տոկոսով:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, անկում են գրանցվել շինարարության, առեւտրի շրջանառության, արտաքին առեւտրաշրջանառության ոլորտներում: Սպառողական գների ինդեքսը նվազել է 1,4 տոկոսով, արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսն աճել է 3,9 տոկոսով:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱԶՄԱԶԳ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅԱՆԸ

Հոհենֆելսում (ԳԴՀ) տեղակայված ԱՄՆ զինված ուժերի միայյալ բազմազգ վարժական կենտրոնում ավարտին է մոտենում «Միաչուլված սուր-2016» բազմազգ զորավարժությունը, որին 2016թ. մարտի 29-ից մասնակցում է նաեւ Հայաստանի զինված ուժերի 32 հոգանոց բժշկական ստորաբաժանումը: Զորավարժությանը ներգրավված են 16 երկրների ընդհանուր թվով մինչեւ 5,000 զինծառայողներ:

Զորավարժության ընթացքում հայկական կողմն ապահովել է ՆԱՏՕ-ի չափանիշներով 2-րդ մակարդակի բուժօգնություն եւ բացազատվել ու առաջին անգամ արտերկրում գործարկվել է Հայաստանի զինված ուժերի ամերիկյան ԻՄԵԴՍ (EMEDS) համակարգի շարժական դաշտային հոսպիտալը:

ՆԱՏՕ-Ի ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի պաշտպանության նախարարության եւ ՆԱՏՕ-ի միջեւ ամենամյա Անհատական գործընկերության համագործակցության ծրագրի շրջանակներում ապրիլի 18-ից 21-ն ընկած ժամանակահատվածում Երեւանում էր գտնվում Հյուսիսատլանտյան դաշինքի Բրունսումի համատեղ ուժերի հրամանատարության շարժական ուսումնական խումբը: Այցի նպատակը Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի հրամանատարաշտաբային դասընթացի ունկնդիրների համար օպերատիվ պլանավորման գործընթացի վերաբերյալ դասընթացի անցկացումն էր:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ՀՕԳՈՒՏ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵԳՄԱՆ

Արցախի Հանրապետության կառավարության կողմից բացված հատուկ հաշվեհամարին ապրիլի 4-20-ը ընկած ժամանակահատվածում 4,350 իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կողմից փոխանցվել է, ընդհանուր առմամբ, 3,317,677,639 դրամ՝ ներառյալ արտարժույթով փոխանցումները, իսկ միայն ապրիլի 20-ին՝ 45,894,276 դրամ՝ փոխանցված 155 անձանց կողմից: Ողջ գումարն ուղղվելու է պաշտպանության բանակի մարտունակության հետագա ամրապնդմանը:

ՄՇԱԿՎԵԼ Է ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀԱՍՑԵԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Հայաստանի վարչապետի հանձնարարականով՝ ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում զոհվածների ընտանիքներին հասցեական աջակցություն ցուցաբերելու կարգը մշակվել է: Դրանով նախատեսվում է զոհվածների ընտանիքներին ներգրավել եկամտաստեղծ գործունեության մեջ եւ դրան համապատասխան աջակցության սխեմա ներկայացնել:

Խոսքը ոչ միայն ապրիլյան դեպքերի, այլ նաեւ ազատամարտի ընթացքում բոլոր զոհվածների ընտանիքների մասին է:

ԲՈՒՀԸ ԿԱՆՉՈՒՄ Է

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿՐԹԱ-ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Ախալքալաքիի «Երիտասարդական կենտրոն»-ում եւ Նինոծմինդայի «Ռաֆայել Ջավախ» կրթամշակութային կենտրոնում կայացավ Ուկրաինայի Տերնոպոլ քաղաքի Ազգային տնտեսագիտական համալսարանի Երեւանի կրթա-գիտական ինստիտուտի նոր՝ 2016-2017 ուստարվա ընդունելության քննություններին նվիրված նոր ծրագրի շնորհանդեսը:

Երեւանի այս կրթօջախը տեղի երիտասարդներին ու դպրոցների այս տարվա շրջանավարտներին նոր ծրագիր ներկայացրեց ինստիտուտի ռեկտոր Սահակ Ղուդրատյանը, որպեսզի նրանք ճիշտ ինֆորմացիա ունենան բուհի մասին:

Պատմեց ինստիտուտում սովորելու պայմանների, բուհի առօրյայի եւ ինստիտուտավարտների հետագայի ու ապագայում աշխատելու հնարավորությունների մասին:

Ասվեց նաեւ, որ ինստիտուտն ունի քոլեջ, որտեղ ընդունվում եւ սովորում են իններորդ դասարանն ավարտած աշակերտները, ովքեր ուսումը հետագայում կարող են շարունակել նույն ինստիտուտի երկրորդ, իսկ գերազանց ավարտածները՝ երրորդ կուրսից:

Նշվեց նաեւ, որ այն ջավախահայ երիտասարդները, ովքեր խնդիրներ ունեն վրացերենի իմացության առումով, ինստիտուտում գործում են վրացերենի ֆակուլտատիվ դասընթացներ, որտեղ ուսանողները կարող են լրացնել վրացերենի իրենց գիտելիքների պակասը, եւ ընդգծեց ու իր գոհունակությունը հայտնեց ջավախահայ այն ուսանողների հասցեին, ովքեր իրենց բուհն ավարտելուց հետո, վերադարձել են իրենց ծննդավայրեր եւ աշխատում են պետական կառույցներում:

Շնորհանդեսին ներկա Նինոծմինդայի մունիցիպալիտետի վարչության մշակույթի ծառայության ղեկավար Ժորա Սնխչյանը, ամփոփելով միջոցառումը, ասաց. «Կարծում եմ, որ մեր շրջանավարտները լավ կմտածեն այս ուղղությամբ եւ ապագայում կցանկանան սովորել այս հեղինակավոր բուհում»:

ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

«ԻՄ ԹԲԻԼԻՍԻՆ» ՆԱԽԱԳԻԾԸ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Իմ Թբիլիսին» նախագծի շրջանակներում, երկու օրվա ընթացքում, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի դպրոցների բարձր դասարանների աշակերտները իրենց թբիլիսցի հասակակիցների հետ այցելեցին Թբիլիսիում երկրի խորհրդարանի շենք եւ Արդարադատության տուն:

«Վիրահայերի միություն» (ղեկավար՝ Նարեկ Բայանդուրյան) հասարակական կազմակերպության նախաձեռնած վերոնշյալ նախագծի նպատակն է՝ աջակցել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների վրաց հասարակայնության ինտեգրման գործընթացին, հասարակական կյանքում նրանց ակտիվ ներգրավմանը:

Նախագծի շրջանակներում ջավախեթցի եւ թբիլիսցի աշակերտները կայցելեն նաեւ Վրաստանի ժողովրդագրական թանգարան:

Նկարում.- Աշակերտները խորհրդարանի շենքում, խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանի հետ:

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

Կյանքի 66-րդ տարում կյանքից հեռացավ Թբիլիսիի Ա.Ծուլուկիձեի անվան ուրոլոգիայի Ազգային կենտրոնի բազմավաստակ աշխատակից, բժշկական գիտությունների դոկտոր Միքայել Խաչատուրովը: Բարձր մակարդակի արհեստավարժ, հիանալի գործընկեր, հայրենասեր, իր գործի քաջ գիտակ Միքայել Խաչատուրովը իր ողջ կյանքը նվիրեց մարդկանց անձնվիրաբար ծառայելուն:

Միքայել Խաչատուրովը ծնվել է 1950 թվականին՝ Ախալցիխեում: Մանկությունն անցկացրել է Թբիլիսիում: Հաջողությամբ ավարտելով Երեւանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը, սկսել է աշխատել Սարատովի հիվանդանոցում:

1980 թվականին Թբիլիսի վերադառնալուց հետո, սկսել է աշխատել Ա.Ծուլուկիձեի անվան ուրոլոգիայի Ազգային կենտրոնում, որտեղ էլ վերջնականապես ձեւակերպվեց որպես փորձառու բժիշկ: 1990 թվականին հաջողությամբ պաշտպանեց թեկնածուական թեզը:

Հանձինս Միքայել Խաչատուրովի, մեծ արհեստավարժի գործին նվիրված անձնավորության, մենք կորցրեցինք հիանալի գործընկեր, մեծատառով մարդ:

Խորապես վշտակցում ենք Միքայել Խաչատուրովի ընտանիքին՝ երեխաներին, հարազատներին, կնոջը, ում համար նա միշտ եղել է հենասյուն, հոգատար հայր, սիրող ամուսին:

Իր գործին նվիրված ազնիվ մարդու՝ Միքայել Խաչատուրովի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտում:

ՈՒՐՈԼՈԳԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈԼԵԿՏԻՎ

ՃԱՆՐԱՄԱՐՏ

ԱԿՏԻՎՈՒՄ՝ ՈՍԿԵ ՄԵԴԱԼՆԵՐ ԵՎ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՈՒՂԵԳՐԵՐ

Նորվեգական Ֆորդե քաղաքում ավարտվեց ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը: Գերծանր, 105 կգ-ից ավելի քաշային կարգում մայրցամաքի ուժեղագույնի կոչումը նվաճեց վրաց մարզիկ Լաշա Տալախաձեն: Նա ուժեղագույնն էր պոկման եւ հրման մրցումներում ու երկմարտում՝ իր ակտիվում գրանցեց երեք ոսկե մեդալ:

Տղամարդկանց գերծանր քաշային կարգում երկրորդ հորիզոնականը զբաղեցրեց հայաստանցի Գոռ Մինասյանը:

Կանանց, 75 կգ քաշային կարգում Վրաստանի ներկայացուցիչ Անաստասիա Գոտֆրիդը երեք արծաթե մեդալով զբաղեցրեց երկրորդ տեղը՝ առաջնությունը զիջելով Հայաստանի դրոշի ներքո հանդես եկող Հռիփսիմե Խուրշուդյանին:

Վերոնշյալ մարզիկները, եվրոպական առաջնության մրցանակների հետ միասին նվաճեցին նաեւ ամռանը Ռիո Դե Ժանեյրոյում անցկացվելիք օլիմպիական խաղերին մասնակցելու ուղեգրերը:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Մարմնի որեւէ անդամի գործունեության կորուստ արյան զեղման պատճառով: 6.Կյանքը, բնությունը ուսումնասիրող իմաստասեր: 9.Հին իրանական սուրբ գրքերի ժողովածու: 10.Կանադացի դերասան եւ երգիչ Մարտին ...: 11.Շան ձագ: 13.Պոնչիկ: 14.Համազգեստի ուսին ամրացող տարբերանշան: 15.Գետ Ռուսաստանում: 16.Նեխուրազգիների ընտանիքին պատկանող միամյա տերեւաբանջար: 18.Վրաց երաժիշտ եւ դերասան ... Մենաբդե: 19.Լայն գրունտային ճանապարհ: 21.Ոստայնանկ, մանածագործ: 22.Որեւէ կազմակերպության անդամների ժողով: 24.Հին եգիպտոսում աստվածների թագավորը եւ փարավոնների իշխանության հովանավորը: 26.Կայուն քամու տեսակ: 28.Ապաշնորհ, վատ գրող: 31.Պտտվող հարմարանքի միջոցով գազի, ջրի ուժը մեքենայական աշխատանքի փոխարկող շարժիչ: 32.Զինվորական կոչում: 34.Գետ Ուկրաինայում: 35.Զամբիայի մայրաքաղաքը (Աֆրիկյա): 36.Կրակապաշտների կրոնական պաշտամունքի տեղ: 38.Պետություն հյուսիս-արեւելյան Աֆրիկայում: 39.Օպերային մեներգ: 40.Բնության անկառավարելի, անսանձ ուժ: 41.Հեղուկների եւ գազերի ճնշումը չափելու սարք: 42.Հանգստավայր միջերկրական ծովի ափին:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ծովային խոշոր կաթնասուն: 2.Բժշկության բաժին: 3.Մարմնի մաշկի խորշոմ, կնճիռ: 4.Համալսարանային քաղաք ԱՄՆ-ում: 5.Կղզի Միջերկրական ծովում: 6.Հրազենի պարկուճի անցքը բացող ու փակող հարմարանք: 7.Մողեսի տեսակ: 8.Քրիստոսի 12 աշակերտներից: 12.Որպես պատիժ գանձվող դրամական վճար: 13.Ճշմարիտ իրողություն: 17.Հին պարսկական ոսկեդրամ: 18.Հարգալից դիմելաձեւ կնոջը Ֆրանսիայում: 20.Կանացի երգեցիկ ձայն: 23.Մետաքսե նուրբ գործվածք: 25.Լեհական պար: 26.Ցլամարտի մասնակից: 27.Գյուղական համայնքի կողմից ընտրվող կառավարիչ: 28.«Ալ առագաստներ» վիպակի հեղինակը: 29.Ռուսական շախմատային դպրոցի հիմնադիրը: 30.Քաղաք եւ նավահանգիստ Հնդկաստանում: 33.Կաթնամթերք արտադրող վրացական ֆիրմա: 37.Թագավոր, տիրակալ:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Հյուգո: 6.Սոֆի: 9.Նարեկ: 10.Մանիլա: 12.Ադամ: 14.Արմեն: 17.Ան: 19.Մանուկ: 21.Շարա: 23.Ախուրյան: 26.Կողբ: 27.Սան: 30.Շիրակ: 33.Սե: 34.Տիրանա: 35.Տվեր: 36.Ամբար: 39.Մատյան: 41.Իմաստ: 45.Ստալին: 47.Իմ: 49.Աննա: 51.Մարատ: 53.Ամիկ: 56.Ակտ: 58.Սահակ: 60.Ակր: 61.Նեա: 62.Նիկո: 63.Ամիրյան: 66.Տիբեթ: 68.Դրամ: 69.Ազա:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Յանտար: 3.Գելա: 4.Նանե: 5.Վեհ: 7.Որդան: 8.Ըմբիշ: 11.Արծակ: 13.Մեկ: 15.Նուրբ: 16.Ամասիա: 18.Նանա: 20.Անարմատ: 22.Արի: 24.Խոսե: 25.Ուղերթ: 28.Նաբ: 29.Տարոն: 30.Շերամ: 31.Ռաֆֆի: 32.Կտավատ: 37.Ամ: 38.Ատլաս: 40.Ամլիկ: 42.Մսակեր: 43.Սամ: 44.Անահիտ: 46.Իրան: 48.Մա: 49.Աշնակ: 50.Նանի: 52.Տակի: 54.Մալթա: 55.Կրուզո: 57.Տայդ: 59.Կոբա: 64.Ար: 65.Նա: 67.Եզ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445